

զին վրայ ելած է : Աս պատկերը պիտի ըլլայ գաղափար մը, որուն վրայ ուղածիդ չափ պղնձէ դրամներ կարենաս շինել :

Աւստի գործիքը գործածելու համար՝ պէտք է որ աս գաղափարին վը-
րայ մետաղով կպցընես թելին եր-
կրորդ ծայրը, և գաղափարին ծայ-
րերն ու ետևի դին մոմուտես : Խաղը
մեծ անօթին մէջ լեցուր ջրախառն
ծծմբային թթուուտ՝ ամենատկար :
Օ ինկը աս թթու ջրին մէջ դրուելով
կըսկսի բացասականապէս ելեքտրա-
նալ ու ջրածին կազի մանր պղպը-
ջակներ կ'ելլեն ջրէն դուրս : Ի մանա-
պէս պղտի ամանին մէջ ալ դիր ջրով
հալած պղնձի ծծմբուտը², և պղտի
ամանը մեծին մէջ տեղաւորէ, բայց
անանկոր մագաղաթը զինկին չդըպչի.
ասկէ ետքը շինած գաղափարը կախէ
պղնձի ծծմբուտին մէջ : Ի՞ս գործողու-
թեամբ ծծմբուտի բաղադրութեան
մէջ որչափ պղնձի մասունք որ կան՝
կը կպցին գաղափարին վըայ, ու ելեք-
տրականութենէ առաջ եկած ձգո-
ղութեամբ՝ կը միանան ու մետաղի
կերպարանք կ'առնեն : Քանի կ'եր-
թայ մետաղը կը հաստընայ, և քսա-
նուչորս ժամու մէջ բաւական հաս-
տութեամբ կը ձեանայ դրամին ամե-
նեին նմանը :

Բայց կան քանի մը բաներ ալ՝ ու-
րոնց վրայ մտադրութիւն ընելու է :
Ո՞ւ յմը, նայելու է որ պղնձի ծծրմ-
բուտը միշտ կշտացած՝ ըլլայ. ապա թէ
ոչ, պղնձի մասունքը փոշիի պէս կը-
նստին գաղափարին վրայ ու իրարու-
հետ չեն միանար . անոր համար
քսակով մը կախելու է աս աղէն ան-
ջրին մէջ, որպէս զի մէկ կողմանէ
որչափ որ պղինձը պակսի՝ մէկալ
կողմանէ հաւելով տեղոր լեզոնէ :

2000-AUGUST

1 q.z. Acide sulfurique.

2 Գ.լ. Sulfate de cuivre. Տ. է. էւ դաւ :
3 Կապոյծ ըսելով կը համարցուի ան՝ որ ջուրը
բաւական աղ հալեցընելէն ետքը աւելի չկարենայ
հայեցնել :

տի ըլլայ, չենէ պատկերը ծակծըկած
կ'ելլէ:

Գ. Ուշ որ գաղափարը մաքուր
է, ելած պատկերն ալ մաքուր կ'ըլլայ.
չէ նէ աղտոտ :

Դ. Եղբարաձոյլ պղինձը բոցագոյն
կարմրութիւն մը կ'ունենայ, որ օդ
տեսնելով կը փոխութի. բայց կը ակի
պէս տաքցընելով՝ սեկակ երկաթի
գոյն կ'առնէ և անփոփոխ կրմնայ:

Ե. Աշեքտրածոյլ պղինձը թէպէտ
և առաձգական՝ բայց սաստիկ ալ
փխրուն կ'ըլլայ . թէ որ տաքցընելէն
ետքը կամաց կամաց պաղեցընես՝ կը
պնդանայ , իր փխրունութիւնն ալ
կըկորսունցընէ :

2. Կայելու է որ զինկին ու գաղափարին դիրքը ըստ կարի իրարութուգահեռական ըլլան . չենէ ելեքտրաձոյլ պղնձին հաստութիւնն ալանհաւասար կ'ըլլայ :

Է . Ո՞ւ որ ելեքտրականութիւնը
սաստիկ ըլլայ , պղինձն ալ անկարգ
կերպով կը հաստընայ . գունտ գունտ
կը ժողվի , և տեղ տեղ բոլորովին բա-
րակ կը մնայ . իսկ ելեքտրականը տիկար
ըլլալով պղինձն ալ միակերպ կը հաս-
տընայ :

**Ոսկեզօծելու ու արձաթազօծելու
վրայ ուրիշ առափելով կրխօսինք :**

ԲԱԿԱՆԻ ՊԱՏՐՈՒԹԵՐՆ

1 *παραστάση* **2** *παραστάσεως*

լյսութութ սքանչելի նախախնա.
մութիւնը աշխարհիս ամէն կողմը
այնպիսի բոյսեր բուսուցեր է, որ նոյն
կողմերը չեղածներուն տեղնալ բռնէ.
աս տեսակ բոյսերէն մէկը լցա-
մաթուզ կամ Պանան ըսուածն է,
մէկն ալ լնանասը, որոնց վրայ զատ
զատ հոս խօսինք :

Ը շամաթուզը, որ ԱՌալապարի լեզուով գումանալու կ'ըսուի, տաք երկիրներու մէջ մեծ ջանքով կրմշակեն,



I շամաթուալ:

ինչպէս արևելեան ու արևմտեան չնդկաստան, և Աֆրիկէ։ Այսոր բունը գրեթէ բոլոր մէջէ մէջ մտած տերեւի կոթերով ձեւացած է, և վեց ոտնաչափէն ինչուան տասուերկու ոտնաչափ բարձրութիւն կ'ունենայ. ամենեին Ճիւղ չունի, հապա վերի ծայրը տասուերկու տերեւով կատարք մը կ'ունենայ։ Այս տերեւներուն լայնքը մէկ ու կէս կամերկու ոտնաչափ է, իսկ երկայնքը վեց կամ տասը. գոյներնին

աղուոր կանաչ, և վրայի կողմերնին ողորկ ու փայլուն։ Այս տերեւներուն կազմութիւն զմարդ կ'ապշեցընէ. դըրսիները գրեթէ հորիզոնական դիրք ունին, քիչ մը ներսինները առ ՚ի շեղ, իսկ մէջինները գրեթէ ուղղահայեաց են, և իրենց ծայրը ծռելով՝ ծածք մը կը ձեւանան որ ոչ արև կ'անցնի անկէ և ոչ անձրե։ Տերեւներուն մէջտեղէն կ'ելլէ ծաղկին ու պտղին փունջը։ Պտղին ձեւը վարունգին նման

Է՛ մէկ բթաշափ տրամագծով, և ու-
թը՝ ինը բթաշափ երկայնութեամբ .
քանի որ հասուննայ՝ կըդեղնի : Եր-
բեմն մէկ ձիւղը ինչուան հարիւր հատ
կուտայ :

Պամաթուղին տերեւները իրենց
մատղաշութեանը ատեն սաստիկ ձը-
կուն ըլլալով՝ Հնդկաստանցիք անոնց-
մէ ամէն տեսակ ամաններ կըշինեն՝
մէջերնին ջուր ու կերակուր դնելու
համար . մներնին ալ անոնցմով կը
ծածկեն : Ո՞իայն մէկ տերեւէն մար-
դու լայն ու երկայն գօտի մը կրնայ
շինուիլ, երկու տերեւէն՝ մարդուս գըլ-
խէն ինչուան ոտքը զգեստ մը կրնայշի-
նուիլ. թարմ տերեւներէն սեղանի փը-
ռոց ու անձեռոցներ կըշինուին :

Պտուղը տասը կամ տասուերկու
ամսէն ետքը կուտայ , ու ան պտուղ
տուող բունը կըչորնայ . միայն թէ
տասուերկու շաքիլ կամ ձիւղ կըթո-
ղու որ երթալով կըմեծնան , առջի-
նին տեղը կըբռնեն , ու տասը ամսէն
պտուղ կուտան :

Ո՞շակելուն կերպն ալ շատ դիւրին
է . վասն զի ուրիշ բան պէտք չէ ,
բայց եթէ պտուղ տուած բունը կըտ-
րել , ու նոր ելած տունկերուն քովե-
րը տարին երկու անդամ բահով բը-
րելու հողը կակըղընել :

Ի՞այց ան չորցած բունն ալ բանի
կուգայ . վասն զի անոր մէջ կակուղ
հիւթ մը կայ որ դիւրութեամբ կըր-
նայ զատուիլ քովի ջղային նիւթե-
րէն . աս միջուկին վարի կտորը փը-
րելովուջրի մէջ եփելով՝ շատ մնդա-
րար ուտելիք մը կ'ըլլայ մարդկանց
համար : Բունը քանի որ թարմ է՝
ընտանի կենդանեաց կըտրուի , ինչ-
պէս են փիղը , կոյն ու ոչխարը . և ո-
րովհետեւ երկայն ատեն թարմ կը
մնայ՝ ծովով ճամբորդութիւն ընելու
ատեն աւելի կըգործածուի՝ կենդա-
նիներուն տալու համար : Հնդիկները
ասոր թելերէն չուան ու հաստ կտաւ-
ներ ալ կըշինեն . իսկ աւելի բարակ-
ներէն՝ հագնելու զգեստներ կըշի-
նեն . Պտղին մէջ ալիւրի պէս՝ եղոտ-

ու անուշահոտ հիւթ մը կայ որ
շատ աւողջարար ու համով է : Ո՞ա-
տակասկարի աղամաթուղը անանկ
մեծ է , որ մէկ հատէն մարդ մը կը
կշտանայ . իսկ հասարակածին տա-
կը բուսածներուն պտուղը աւելի հա-
մով է : Ո՞մանց համը քրքումի կը-
նմանի , ոմանցը մեխակի , ոմանցն ալ
նարնջի ծաղկին : Պտղին մէջ ամե-
նեին կուտ չկայ . քանի որ հասուն-
ցած չէ՝ թուզուններն ու որդերը ա-
մենեին չեն մօտենար ու չեն վնասեր ,
թէպէտ և վրան բարակ մաշկով մը
միայն պատած է , ու հաստ կձեպ չու-
նի . և թէ որ բոլորովին չհասունցած
քաղես , ինքն իրեն կըհասունայ
ու ամիս մը կըդիմանայ :

Հնդիկներուն ու եւրոպացի Ճամ-
բորդներուն սովորական կերակուրը
ասոր պտուղն ու պտղին մէջի ալիւրի
նման հիւթն է . աս ալիւրէն շատ
համով ու աւողջարար հաց ալ կըշի-
նուի : Հնդիկեան կղզեաց մէջ գինի
ալ կը հանեն ասկէ , որ նոյնպէս շատ
համով կ'ըլլայ ու շատ կը գործա-
ծուի : Պտուղը երկայն ատեն պա-
հել ուղողը՝ արմաւի ու թուղի
պէս կըչորցընէ : Ո՞ս բոյսը Եւրոպայի
մէջ ալ առաջ կուգայ հիմա , բայց
սաստիկ տաք կ'ուզէ . անոր համար
միշտ ջերմանոցի մէջ կըպահուի :

Ենանաս :

ՏԱՐ երկրի բոյսերուն մէջ խիստ
յարգի ու անուանի է նաև անանա-
սը . ասիկայ ոմանք կ'ըսեն թէ արևե-
լեան Հնդկաստանի բոյս է , ոմանք
ալ թէ միջին Հնդիկայի . հիմա Հն-
դիկեան կղզիները , Հնդիկէ ու ա-
րևադարձներուն տակը եղած երկիր-
ները շատ կըգտնուի , և հարիւր տա-
րիէն աւելի է որ Եւրոպայի ջերմա-
նոցներուն մէջ ալ կըմեծցընեն :

Հնանասին տերեւները արմատ կը
ձգեն . ասոնց երկայնութիւնը մէկ ոտ-

քեն ինչուան երկու ուսք կ'ըլլայ , լայ-
նութիւնը երկու իրեք բթաւափ . աս
տերևներուն ծայրը սուր է , երկու
կողմը փշոտ , ու մէջտեղէն դէպ 'ի վեր
կ'երկըննայ մէկ ցօղուն մը՝ երկու ու-
նացափ բարձր , ու մէկ բթաւափ հաստ :
Ի՞ս ցօղունը առաջ կապուտ ծաղկը-
ներ կուտայ հասկի ձեռվ . ան հասկը
կը չորնայ , ու տեղը պտուղ մը կ'ելլէ ,
որ երթալով ան ծաղկըներուն տակէն
կը մեծնայ , և բոլոր պտուղը մէկտեղ
պիստակի ' կընմանի : ' Երսի կողմը
Ճերմակ է . իսկ մէջը կեղրոնէն դէպ
'ի թեւերը ձգուած բարակ բարակ
Ճղեր կան ճառագայթի ձեռվ . վր-
րայի կեղեն ալ ոսկեգոյն դեղնութի
մը ունի : Հասարակ անանաս ըսուա-
ծը աս է . բայց տնկաբանները շատ
տեսակ ալ կը համրեն , որ աւելի Ի՞ն-
գղիայի մէջ կը գտնուին . ինչպէս Ճեր-
մակ անանաս , սե , կարմիր , կանաչ ,
մանուշակագոյն , մնխուշ , կոնոնա-
ձե և այլն :

Ի՞նանասին հոտը անուշ է , հա-
մը թթուաշ ու զովացընող . միայն
քիչ մը դժուարամարս է , մանաւանդ
տկար ստամոքս ունեցողներու հա-
մար : Ի՞նանասին հիւթը քիչ մը թը-
թուելէն ետեւ սաստիկ զօրաւոր գի-
նի կը դառնայ :

Ուրիշ ամէն պտուղներէն աւելի
հոգ ու խնամք կ'ուզէ անանասը . և
որովհետեւ մեր երկիրներուն մէջ
հունտ չտար , անոր համար իր ցօղու-
նին վրայի ծիլերը զատելով կը բազ-
մանայ , ու միշտ սաստիկ տաքութիւն
կ'ուզէ , առատ ջուր ու պարարտ եր-
կիր : Ինչուան 40 աստիճան ջերմու-
թեան կրնայ դիմանսալ Ի՞նոմիւրի
ջերմաչափով , և 20 աստիճան ջեր-
մութենէն վար չդիմանար . ուստի
ամանի մը մէջ տնկելէն ետեւ նոր աղ-
բի մէջ պահելու , վրան ալ ծածկելու
է որ տաք մնայ , և ջերմանոցին ապա-
կիէ փեղկերուն վրայ խսիր բաշելու
է որ գիշերուան ցրտութիւնը արգե-

լուի : Ծնկելէն իրեք շաբաթ ետքը
սկսելու է ջուր տալ , ու քանի որ ար-
մատները կ'երկըննան՝ ջուրն ու ջեր-
մութիւնն ալաւելցընելու է . գաղջ
ջուրը բարակ անձրւի պէս պէտք է
բոյսին վրան սրսկել : Երբոր պը-
տուղը կը հասուննայ՝ ջուր տալը դադ-
րեցընելու է , որպէս զի շատ ջրոտ
չըլլայ , ու անուշահոտութիւնը չեր-
թայ :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Լիկամատի Վրայ :

Խ՞նջ բան է եկամուտը , և քանի
տեսակ կրնայ ըլլալ .

— Եկամուտ կ'ըսուի բերքին ան կտո-
րը որ տարուէ տարի կամ ամսէ ամիս
կը չահի մարդ աշխատելով , և կամ
ուրիշներուն աշխատանքը վարձելով :
Եւ որովհետեւ այսպիսի բերքին աղ-
բիւրը տեսակ տեսակ կրնայ ըլլալ ա-
նոր համար եկամուտն ալ շատ տե-
սակ կը բաժնուի : Դետնէ , շէնքէ ,
կամ հաստատուն ստացուածքէ ա-
ռաջ եկած վաստակը մասնաւոր կեր-
պով Եկամատ , կամ կամ շահ կ'ըսուի .
վաճառականութենէ , արուեստէ և
նիւթական աշխատանքէ առաջ եկա-
ծը կ'ըսուի կատակ . իսկ թէ որ աս աշ-
խատանքը նիւթական բանի վրայ չէ ,
ան ատեն կ'ըսուի Եռլակ կամ առձիկ :
Բնդհանրապէս երբոր քաղաքական
պաշտօնաւորաց ոռօձիկը չափազանց
շատ է , հասարակաց հարստութեանը
վնաս կ'ըլլայ . և աւելի ալ վնաս կ'ըլլայ՝
երբոր աշխատողներուն վաստակը
դատարկակեաց մարդկանց հարըստ-
նալուն գործածուի : Ի՞սով կ'իմացուի
որ եկամուտները ինչ տեսակ ալ ըւ-
լան՝ քաղաքական տնտեսութեան մէջ
պէտք է աղէկ դիմուին , այնպէս որ
ոչ անով ապրովներուն համար խիստ